Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

13746

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք.

ԽՈՐՀՐԴ. ՅԵՎ ԱՌԵՎՏՐ. ԾԱՌԱՅՈՂ. ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԽՈՐԱՌԾԱՌ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՊԱՐԱՏԻ ՁՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

(Միության Կենտկոմի հրահանգչական նյութեր)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԽՈՐԱՌԾԱՌԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՎԱՐՉՈՒԹՅԱՆ
Յերևան 1929

Գրոլեսարներ բոլոր յերկրների, միացեք.

ԽՈՐՀՐԴ. ՅԵՎ ԱՌԵՎՏՐ. ԾԱՌԱՅՈՂ. ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

350.7
Հ
Ա 1/3853
16374

ԽՈՐԱՌԾԱՌ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՊԱՐԱՏԻ ԶՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

(Միություն կենցաղամի հրահանգչական նամակը)

ՀԱՅ ԳՐԱԽՐԱՏԱՐԱՆԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԵՎՆԻՎԵՄԻԱ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԽՈՐԱՌԾԱՌԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՎԱՐՉՈՒԹՅԱՆ
Յերևան 1929

ՏՊԱՐԱՆ ՀԵՐՄԵՍ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ,
ՄԱՐՔՍԻ ՓՈՂ. № 29
ԳՐԱՌԵՊ. № 2258բ.
ՏԻՐԱԺ 1000,

ԽՈՐԱՌԾԱՌ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՊԱՐԱՏԻ ԶՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Հարգելի ընկերներ!

«Ինդուստրիալիզացման տեմպի արագացումը և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման անցնելը նոր պահանջներ են ներկայացնում վողջ պետապարատի աշխատանքի վորակի վերաբերմամբ» (16-րդ կուսկոնֆերանսի վորոշումներից)։ Այս խնդիրները չեն կարող վճռվել առանց պետական և կոոպերատիվ ապարատի անձնական կազմի վճռական քարեկավմանը, այդ ապարատի փտած, քայքայված անձնավորություններից զտման միջոցով, վորոնք աղճատում են խորհրդային որենքները, ընդդիմանում են խորհրդային ապարատի եժանացման և լավացման աշխատանքին։

Խորառծառը դեռ Կենտկոմի 6-րդ պլենումում ճանաչեց մեր Միության այս աշխատանքի մեջ մասնակցելու անհրաժեշտությունն ու լայն մասսաներին և ամբողջ խորհրդային հասարակայնության այդ աշխատանքի մեջ ներգրավման կարևորությունը։

1929 թվի հունիսի 2-ին հրատարակվեց կառավարության վորոշումն ու ԽՍՀՄ-ի ԲԳՏ ժողկոմատի հրահանգը պետապարատի զտում անցկացնելու կարգի

մասին. այս նամակով Կենտկոմը մտադիր է ցուցմունքներ տալ միությունական կազմակերպություններին պատապարատի զտման գործում ԲԳՏ ժողկոմատին աջակցություն ցույց տալու և միության մասնակցության մեթոդների մասին։

Այդ պատճառով Խորհուրդը Կենտկոմն առաջարկում է՝

1. Այս նամակն ստանալուն պես հրավիրել վարչության լայնացրած նիստ միության սեկցիաների բյուրոների և հիմնարկների տեղկոմների հետ։

Միության վարչությունները պետք է հատուկ հրահանգներ տան այն հիմնարկների տեղկոմներին, որոնք առաջին հերթին են ստուգման ենթարկվելու։

2. Միությունական կազմակերպությունները պետք է մշակեն հիմնարկներում աշխատակիցների լայն ժողովներ անցկացնելու ծրագիր, որոնք պետք է նվիրված լինեն ապարատի զտմանը։ Պետք է այդ ժողովներն ապահովել վորակավոր զեկուցողներով և հնարավորություն ստեղծել, վոր նույն ժողովներում ԲԳՏ ժողկոմատի հրահանգի և այս նամակի հիման վրա բացատրություններ տրվեն ապարատի զտման կարգի մասին։ Ցանկալի է, վոր մինչև ժողովը, այդ հարցը լուսաբանված լինի պատի թերթերում։ Այս ժողովներին պետք է հրավիրվեն բանվորներ առաջին հերթին նրանցից, որոնք անմիջականորեն կապված են տրվյալ հիմնարկի հետ (որինակ Խորհրդի համապատասխան սեկցիայի անդամներին, սոցապպատդամավորներին, ժողատենակալներին և այլն)։

3. Անհրաժեշտ է կոչ անել միության անդամներին, վոր նրանք հայտնեն առանձին աշխատակիցների

կողմից տեղի ունեցող աշխատանքի աղճատումների, ինչպես նաև բյուրոկրատիզմի ու ձգձգումների հայտնի դարձած դեպքերի մասին։

4. Միությանն կազմակերպությունները պետք է ներգրավեն ընկերների, որոնք նախնական հրահանգումից հետո, պետք է ոգտագործվեն անցկացնելու համար զրույցներ զտման կարգի մասին անկյուններում ու ակումբներում, տալու պարզաբանումներ և տեղեկանքներ։

6. Պատի լրագրերն կամպանիայի նախապատրաստման և անցկացման ամբողջ ընթացքում իրենց աշխատանքի իբրև հիմք պետք է ընդունեն զտման խնդիրները, լուսաբանելով ապարատի թերությունները, անցկացնելով հինգարկի առանձին մասերի և առանձին աշխատակիցների աշխատանքների ստուգատեսներ, անցկացնելով հինգարկի առանձին մասերի միջև մրցումներ, տպելով առանձին ծառայողների կողմից հաղորդված ստուգված տվյալներ ձգձգումների, բյուրոկրատիզմի մեջ մեղավորների, դասակարգային գիծը աղճատողների մասին և այլն։

6. Գյուղական վայրերում, որտեղ կան փոքրաթիվ պատի լրագրեր և որտեղ տպագիր թերթերը ուշ են ստացվում, ստուգիչ հանձնաժողովները համաձայն ԲԳՏ հրահանգի, իրենց աշխատանքի ժամանակ պիտի հրատարակեն պատի լրագրի տիպի բյուլետեններ ստուգման ընթացքին վերաբերող ինֆորմացիայով, բյուրոկրատիզմի, դասակարգային գծի շեղման դեպքերի մերկացուցիչ փաստերով և այլն։ Կենտկոմն ամրագրում է համարում, որ մեր գյուղական միությունական կազմակերպությունները ըստ ամենայ-

նի աջակցեն այդ բյուլլետենների հրատարակմանը, տալով նյութեր ինչպես նաև նյութական աջակցություն։ Այդ աշխատանքին պետք է ներգրավվի միության ակտիվը. բյուլլետեններին պետք է մասնակից արվեն ստուգվող հիմնարկների աշխատակիցները։

7. Պետք է ստուգման յենթակա հիմնարկների տնտեսանձնաժողովները ի մի հավաքեն հիմնարկի աշխատանքի թերությունները և նրա բյուրոկրատական աղճատումները ընորոշող ամբողջ մատերյալը։ Այդ նպատակի համար պետք է ոգտագործվեն ինչպես իր՝ տնտեսանձնաժողովի ունեցած նյութերը, նմանապես և պատի լրագրներում ու մամուլում լույս տեսած թերթակցությունները։

8. Միությունական կազմակերպությունները պետք է հաստատեն տեղկոմների կողմից նշանակված զտման հանձնաժողովների ներկայացուցիչներին, ապահովելով այդ հանձնաժողովների համար առավել տեսուն և քաղաքականապես ստուգված կազմ։ Այն դեպքերում, երբ միջմիությունական մարմիններն իրենց ներկայացուցչությունը զտման հանձնաժողովներում կտան մեր միության, վարչությունը պետք է նշանակի ամենավրակյալ ընկերոջ իբրև ներկայացուցիչ զտման հանձնաժողովում, բոլորովին ազատելով նրան զտման ամբողջ ընթացքում ամեն տեսակի այլ աշխատանքներից։

9. Միությունական կազմակերպությունները պետք է վարչության ապարատի զտման հետ կապված գործերի նայելու վրրոշ կարգ սահմանեն, աշխատելով ապահովել այդ հարցերի լուծման մեջ մեկնաբանության միատեսակ գիծ, ինչպես և գործերի

ամենաարագ, առանց ձգձգումների ընթացք, յերբ գործը պիտի հանձնվի համապատասխան մարմինների լուծման համար։

10. Փորձերը ցույց են տվել, վոր շատ տեղերում զտման հետևանքով հեռացված ծառայողները, թողած տեղական կազմակերպությունները, դիմում են տալիս անմիջականորեն կենտրոնական մարմիններին և մասնավորապես Կենտկոմին։

Միությունական տեղական կազմակերպությունները պետք է լայն կերպով պարզաբանեն ԽՍՀՄ-ի ԲԳՏ ժողկոմատի հրահանգով սահմանված ծառայողների զտման կարգը, ինչպես և պարզեն, վոր զտման հանձնաժողովների վորոշումների հակման կարգով բողոքարկման և վերանայման ձևը չի կարող խախտվել և գործերը կվերադարձվեն տեղական մարմիններին նայվելու, ինչպես նախատեսված է հրահանգում։ Այն դեպքում, յերբ ծառայողը անհրաժեշտ կհամարի դիմում տալ անմիջականորեն միության Կենտկոմին, պետք է նրան բացատրել, վոր միության Կենտկոմը ևս չի կարող հարցը լուծել առանց ծանոթ լինելու ամբողջ նյութերին և առանց իմանալու տեղական կազմակերպության յեզրակացությունը։ Կենտկոմ ուղղված դիմումները պետք է տրվեն միության տեղական մարմինների միջոցով. այդ դիմումները Կենտկոմ ուղարկելիս միության նահանգական կամ հանրապետական վարչությունները պետք է վերջիններին կցեն գործի վողջ նյութը և իրենց մանրամասն յեզրակացությունը։

11. Վորևե ապարատի առանձին ողակների միջև փոխադարձ ստուգում կազմակերպելու նպատակով

(որինակ՝ սոցապդանձարկղի աշխատանքը սոցապկա-
յանների միջոցով, շրջանային ֆինբաժնի աշխատան-
քը տվյալ քաղաքի ֆինբաժնի միջոցով) անհրաժեշտ
է հրավիրել հատուկ արտադրական կոնֆերանսներ
ըստ առանձին գերատեսչությունների, վորոնք կարող-
են նյութեր տալ ապարատի առանձին ողակներում
գոյություն ունեցող աշխատանքի թերությունների
մասին։

12. Տեղական միությունական կազմակերպու-
թյունները, պետք է միության ակտիվի թվից վերց-
նեն ստուգված, բավական վորակավոր ընկերների,
վորոնք կարողանան ոգնել ԲԳՏ հանձնաժողովին,
զբաղվելով փաստերի ստուգմամբ, ստացվող նյութե-
րի քննությամբ, ինչպես նաև հանձնաժողովներում
տեխնիքական աշխատանք կատարելով։

13. Ապարատի հաճախակի ստուգումների և զբ-
ոսումների փորձը ցույց է տվել, վոր շատ դեպքերում
միությունական կազմակերպությունները, նաև այն
ժամանակ յերբ վոչ մի կասկած չեն ունեցել զտման
հետևանքով պաշտոնից հեռացման վերաբերմամբ հան-
ված վորոշման սխալ լինելու մասին, անհարմար են
համարել դուրս գալ և միության անունից խնդրել
վորոշման վերանայման մասին։ Կենտկոմն այն կար-
ծիքին է., վոր դեպի ամեն մի նման դեպք խիստ և
ուշադիր վերաբերմունք ունենալու հետ միաժամանակ,
պետք է հրաժարվել այն սխալ հասկացողությունից,
վոր իբր թե միությունը չպիտի այդպիսի հարցերի
խառնվի։ Համաձայն ԲԳՏ ժողկոմատի հրահանգի
զտումը չի կարելի համարել իբրև ընդհանուր առմամբ
անվստահություն դեպի Խորհրդային ապարատի աշ-

խաստողները և առանձին աշխատողների վերաբերմամբ արվող գնահատման ու յեզրակացությունների ժամանակ պետք է խիստ օբյեկտիվություն պահպանվի. այս պատճառով միությունական մարմինները այն դեպքում, յերբ զտման հանձնաժողովի վորոշումը հաժարում են սխալ, պետք է իրենց անունից պաշտպանեն առանձին ծառայողների խնդիրները վորոշման վերանայման մասին։

14։ Պետապարատի զտումը պետք է անպայման կապված լինի նրա բանվորականացման հետ։ Միությունական կազմակերպությունները պետք է նախաձեռնություն ցույց տան նշանակելու այն պաշտոնների շրջանակը, վորոնք պետք է փոխարինվեն առաջքաշված բանվորներով։ Պետք է նաև ստուգել թե ինչպես է կատարվում առաջքաշվածների պատրաստումը զտման կարգով հեռացվածներին փոխարինելու համար։ Այս նպատակով պետք է պարզել թե ինչ միջոցներ են ձեռք առնվում առաջքաշվածների ընտրության, նրանց պատրաստման համար առանձին կազմակերպությունների կողմից (արդյունաբերական միություններ, խորհուրդների, կին-բաժնի, տերիտորյալ շրջանի, կոմսոմոլի կողմից և այլն), թե արդյոք այս աշխատանքի մի վորևե ընդհանուր պլան գոյություն ունի։

Յեթե առաջքաշվածների պատրաստման դասընթացներ դեռևս չեն ստեղծված, միությունական մարմինները, պետք է յերևան գան իրրև նման դասընթացների նախաձեռնողներ և կազմակերպիչներ, գնելով այդ հարցը տեղական գործկոմների առջև և մասնակից անելով նրանց կազմակերպման գործում տրն-

տեսակարական մարմիններին։ Այս դասընթացների ունկնդիրների կոնտինգենտը պետք է վորոշել այն հաշվով, վոր վորոշ ռեզերվ լինի ինչպես դասընթացներից, այնպես էլ անմիջականորեն աշխատանքից հետագայում անխուսափելիորեն ինքնակամ հեռացողների նկատմամբ։ Միաժամանակ միությունական կազմակերպությունները պետք է ուսումնասիրեն ինքնակամ հեռացման ամեն մի առանձին դեպքը, հաշվի առնելու այն հետագայում պետապարատի համար առաջ քաշման ընտրություն անելիս։

15. Անհրաժեշտ է ստուգել, թե վորքան կանոնավոր են ոգտագործվում հիմնարկներում ստաժորապրակտիկանտներն ու համալսարաններ ավարտողները, պետք է վճռականորեն պնդել, վոր այդ ծառայողներին տեղավորեն ազատվող պաշտոններում համաձայն նրանց մասնագիտության և վորակին։

Սրա հետ միասին անհրաժեշտ է ստուգել զորացրված հրամկազմի բրոնյայի քանակը և միջոցներ ձեռք առնել այդ բրոնյայի լրիվ ոգտագործման համար։

16. Պետապարատի կտումը պետք է լայն կերպով ոգտագործվի մեր միությունական մարմինների կողմից ծառայողների ավելի լավ և տպարատի ու հասարակական կազմակերպությունների աշխատանքներում փորձված մասի առաջքաշման և զտված ավելի բարձր պաշտոնյաների տեղերի գրավման համար։ Դրա համար միության կազմակերպությունները պետք է անմիջապես անցնեն ծառայողների այդ կադրերի հաշվառման և պարզեն, թե ինչ նրանք աշխատանքներում կարող են ոգտագործվել։

17. Վերջին ժամանակներս տեղի յեն ունենում փաստեր, յերբ առանձին ծառայողները նախատեսելով պետապարատի զտումը, հեռանում են հիմնարկներից իբրև թե սեփական ցարկությամբ և նոր պաշտոնի են անցնում այնպիսի տեղում, վորտեղ նրանց դեռ չեն ճանաչում, հույս ունենալով այս կերպ խուսափել զտման հետևանքով հեռացումից։ Ինչքան վոր մինչև հիմա գործազուրկների կազմը աշխատանքում դեռ չի ստուգված, միության մարմինները պետք է ծառայողների վարման վերաբերմամբ իրենց հրահանգությունն ուժեղացնեն, թույլ չտալով պետապարատի հետագա կեղտոտումը։ Դրա համար պետք է նշանակել տեղկոմի մեկ անդամին ազատելով նրան պրոֆգծով այլ աշխատանքներից։

18. Կենտկոմն անհրաժեշտ է համարում գործազուրկների կազմի ստուգումը և հայտնում է, վոր ՍՍՀՄ-ի Աշխժողկոմատը ցուցմունքներ է մշակում աշխատանքների հաշվեառման մեջ գտնվող գործազուրկների կազմի ստուգման մասին։ Այդ հարցի մշակման վերջանալուն պես Կենտկոմը լրացուցիչ կերպով կհայտնի միության կազմակերպությունների գործազուրկների կազմի ստուգման գործում ունենալիք մասնակցության մասին։

19. Պետապարատի զտման հետևանքով արձակված անձնավորությունների վերաբերմամբ Կենտկոմն առաջարկում է ղեկավարվել հետևյալ ցուցմունքներով։

ա) Այն անձինք, վորոնք կարձակվեն պաշտոնից խորհրդային ապարատի զտման կարգով առանց երկին անգամ պետական, կոոպերատիվ և հասարակական հիմնարկներն ու ձեռնարկները պաշտոնի

մտնելու իրավունքի (առաջին կատեգորիա), պետք է անպայման միությունից հեռացվեն։

բ) Այդ անձինք մասնավոր ձեռնարկներում պաշտոնի մտնելու դեպքում նորից միության մեջ չեն ընդունվում։

գ) Միությունից հեռացումը կատարվում է միության վարչության վորոշմամբ համապատասխան զտիչ մարմինների վորոշման հրատարակումից 3 ամիս անցած, վորպիսի ժամանակամիջոց տրվում է զտվածներին ոգտագործելու համար նախնական զտիչ մարմնի վորոշման բողոքարկման իրավունքը բարձրագույն մարմնի առջև։

դ) Խորհրդային ապպարատի բարձրագույն մարմիններին բողոք տված, բայց 3 ամսվա ընթացքում իրենց պաշտոններում չվերականգնված անձինք հեռացվում են միությունից անկախ այն հանգամանքից, թե արդյոք նրանց բողոքները բարձրագույն մարմինների կողմից նայված են կամ վոչ։

Մառայողը, այն դեպքում, յերբ նրան զտվածների առաջին կատեգորիային անցկացնելու մասին յեղած վորոշումը փոխվում է, մեխանիկորեն վերականգնվում է իր միությունական իրավունքների մեջ այն միությունական կազմակերպության կողմից, վորը վճիռ եր կայացրել նրա հեռացման մասին։

յե) Այն անձինք, վորոնք զտման կենթարկվեն ավելի պակաս պատասխանատու պաշտոններ գրավելու կամ այլ հիմնարկներում և գերատեսչություններում ծառայության մտնելու իրավունքով (յերկրորդ և յերրորդ կատեգորյա) միությունից չեն հեռացվում։

20. Նկատի ունենալով այն բացառիկ կշանակու-

թյունը, վոր ունի պետապարատի զտման աշխատանքը, Կենտկոմն անհրաժեշտ է համարում, վոր տեղական կազմակերպությունները Կենտկոմին ինֆորմացիա տան աշխատանքի ընթացքի մասին և առաջին հաղորդագրությունն ուղարկեն անմիջապես, հենց վոր Խորհրդային ապպարատի ստուգման հանձնաժողովը կսկսի աշխատել, այն մտքով, վոր այդ հաղորդագրության մեջ ցույց տրվեն այն ձեռնարկումները, վորոնք միությունական կազմակերպությունն անց է կացրել զտման նախապատրաստման համար։

Կենտկոմի քարտուղար՝ ՏՐՈՖԻՄՈՎ

Նախագահության անդամ

տարբի-տնտ.-մասի վարիչ՝ ՑԵՏՈՐՈՎ

A 3853

Հ. ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2

16379

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0038709

A I/3853

ԳԻՆՆ Է 5 ԿՈՊ.